ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 03
ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/14 ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՑ

ք.Երևան **«11» «06» 2026թ.**

Ժամը 12:00

Հանձնաժողովի նախագահ՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչի տեղակալ՝ Լուսինե Գասպարյան

Հանձնաժողովի անդամներ՝
վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի պետ՝ Արման Ճռիկյան
«Սպասարկում» ՊՈԱԿ-ի պարետային ծառայության պետ՝ Ավագ Հակոբյան
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության նյութատեխնիկական ապահովման բաժնի ավագ մասնագետի փոխարինող՝ Մարիամ Ալիխանյան
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության վարչատնտեսական բաժնի ավագ մասնագետ՝ Արթուր Խաչատրյան

Հանձնաժողովի քարտուղար՝
Վարչապետի աշխատակազմի գործերի կառավարչության գնումների կազմակերպման բաժնի գնումների ավագ գործակալ՝ Սոնա Շիրինյան

---

1. «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/14» ծածկագրով գնանշման հարցման էլեկտրոնային ձևով գնման ընթացակարգի շրջանակներում ներկայացված հայտերի վերաբերյալ

1.1 «**ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/14**» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի հայտերի բացումը տեղի է ունեցել 2026թ. մայիսի 18-ին Ժամը 12:00, armeps.am համակարգի միջոցով:

1.2 Հայտերի բացման նիստը կասեցվել է փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով:

1.3 Փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ հայտ ներկայացրած «Սուր և նիզակ» ՍՊԸ–ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ (15.05.2026թ.) ներառված է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներին փոխկապակցված անձանց ցուցակում («Սուր և նիզակ» ՍՊԸ-ի հետ փոխկապակցված կազմակերպությունը՝ «Տեքստիլ Փիփ» ՍՊԸ-ն ներառվել է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում): Միաժամանակ հաշվի առնելով «Տեքստիլ Փիփ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված գրությունը և դատարանի որոշումը, հանձնաժողովը որոշեց դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն, խնդրի կարգավորման շուրջ պարզաբանում ստանալու նպատակով:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 , դեմ- 0

2. «ՀՀՎԱ-ԳՀԾՁԲ-26/14» ծածկագրով գնանշման հարցման վերաբերյալ

Ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարությունից 10.06.2026թ. ստացված N03/26/14622-2026 գրությունը և հաշվի առնելով վերոնշյալ հանգամանքները՝ հանձնաժողովը որոշեց.

- մերժել «Սուր և նիզակ» ՍՊԸ–ի կողմից ներկայացված հայտը, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված կարգի 121–րդ կետը,
- գնման ընթացակարգը հայտարարել չկայացած Գնումների մասին ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի համաձայն,
- հաստատել գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը և հրապարակել,

- Գնումների մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Առաջարկել պատվիրատուի ղեկավարին «Սուր և նիզակ» ՍՊԸ-ի նկատմամբ նախաձեռնել համապատասխան ընթացակարգ,
- «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

Ընդունվել է որոշում՝ կողմ - 4 , դեմ- 0

Հանձնաժողովի նիստին ներկա անդամների և քարտուղարի ստորագրությունները

Հանձնաժողովի նախագահ՝	Լուսինե Գասպարյան	
Անդամներ՝	Արման Ճռիկյան	
	Ավագ Հակոբյան	
	Մարիամ Ալիխանյան	
Քարտուղար՝	Սոնա Շիրինյան	